Բայց առանց այդ էլ Էրզրումի օրերը հաշուած էին։ Նրա դէմ գործում էր ո՛չ միայն Վեհիբ փաշայի օր աւուր աճող բանակը, ո՛չ միայն հակառակորդի հրամանատարութեան առաւելութիւնը, ո՛չ միայն շրջակայ քիւրդական հրոսախմբերը, այլ և ուժերի անհամաչափութիւնը — Թիւրքերը գերակշռում էին թուով, Թիկունքի մահմեդական դանդուածները օգնում էին նրանց և Էրզրումի աւելի քան 20,000 Թիւրք ազգաբնակութեան համակրանքն ու գաղտնի օժանդակութիւնը նրանց հետ էր։ Ճիշտ է, Անդրանիկը փորձեց ձեռք առնել կտրուկ միջոցներ յայտնապէս Թշնամու օգտին ծառայող «Մահմեդական Ազգային Կոմիտէի» դէմ, բայց հիմնական շարիքը դրանով չվերացուեց։

Փետր.14–ից Էրզրումը դարձաւ Թիւրքերի զինուորական գործողութիւնների անմիջական առարկայ, և հայկական առաջապահ մասերը, նրանց ճնշման տակ, քայլ առ քայլ, կռուով քաշուեցին մինչև Իլիջա։ Համախմբելով իր ուժերը Իլիջայի դէմ՝ փետր. 26–ին Թշնամին դիմեց ուժեղ յարձակման։ Սկսուեցին կատաղի կռիւներ, որոնք հետզհետէ տարածուեցին և ուրիշ շրջաններ։ Թշնամու յախուռն գրոհի առջև մերոնք նահանջեցին՝ տալով ահագին զոհեր։ Անդրանիկը ցոյց տուեց անձնական մեծ քաջութիւն և անվեհերութիւն, բայց բանակն ու բերդի պաշտպանութիւնը ղեկավարող չունէր։ Որոշ զօրամասեր կռուեցին հերոսաբար, ուրիշներ՝ չկատարեցին իրենց պարտականութիւնը։ Երեկոյեան դէմ արդէն պարզ էր, որ դրութիւնը անյոյս է։ Անդրանիկի հրաւէրով գումարուեց զինուորական արտակարգ խորհրդակցութիւն, որը որոշեց պարպել քաղաքը և նահանջել։

Յաջորդ օր, փետր. 27–ի վաղ առաւօտից, սկսուեց Էրզրումի պարպումը, ամենաողբերգական պայմաններում։ Զինուորներով ու գաղթականներով լեցուած գնացքներ ու հետիոտն բազմութիւններ շարժուեցին դէպի Հասան–Ղալա։ Ժամը 9–ին Թիւրքերն արդէն քաղաքում էին։ Վերջին հեռացողը այստեղից էլ, ինչպէս և Երզնկայից, Մուրատն էր իր ճիաւորներով, որ պաշտպանում էր գաղթականութիւնը։ Թիւրքերի ձեռքն ընկաւ անհաշիւ ռազմամթերք, պարենաւորում, հագուստ և ուրիշ հարստութիւններ։ Քաղաքում մնացած հարիւրից աւելի հայերը կոտորուեցին։ Իրենց հերթին, նահանջող հայերն էլ Էրզրումում ու ճանապարհին կոտորեցին պատահած Թիւրքերին։

Ճանապարհին իրենց միացնելով նաև Խնուսի կուսակցների մի մասն ու գաղթականութիւնը՝ Էրզրումի ուժերը մարտ 2–ին հասան Սարըղամիշի ուժերին։

Էրզրումի անկումով փաստօրէն ամբողջ Թիւրքահայաստանը նորից անցաւ Թիւրքերի ձեռքը։ Ճիշտ է, Ալաշկերտ–Խնուս–Վան տարածութիւնը դեռ գրաւուած չէր, բայց նրա ճակատագիրն էլ որոշած պէտք էր համարել։ Թիւրքահայկական գաւառները նորից դարձան աւերակ և անմարդաբնակ։

Պատերազմը փոխադրուում էր ռուսահայկական հողերի վրա։ Բնաջնջման սպառնալիքը կախուում էր և հայութեան երկրորդ հատուածի գլխին։ Կռիւը ո՛չ միայն ըստ էութեան, ձեւականօրէն էլ ստանում էր հայ–Թիւր–